



«27» քառեկամբ 2011թ.

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 105

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի N29 և 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 7-Ի N 46 ՀՐԱՄԱՆՆԵՐԻ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1337-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) հատկացման հարցերով հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 20-ին կայացած նիստի N 8 արձանագրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2010 թվականի փետրվարի 23-ի <Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում բնակելի տուն (բնակարան) ստացող ընտանիքների ցուցակները հաստատելու մասին> N 29 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) հրամանի N 5 հավելվածով հաստատված՝ << Լոռու մարզի Սարահարթ համայնքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, 2008 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ հաշվառված ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում բնակելի տուն ստացող ընտանիքների ցուցակի 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

8	Մարկոսյան Դրախտ	1931թ.	AB 0529906, տրված 30.06.1997թ., 052-ի կողմից	6	4
	Մարկոսյան Գագիկ Սերյոժայի	1970թ.	AH 0550855, տրված 14.03.2008թ., 052-ի կողմից		
	Պապոյան Օվսաննա Մանվելի	1977թ.	AH 0380865, տրված 15.06.2007թ., 052-ի կողմից		
	Մարկոսյան Սերյոժա Գագիկի	1994թ.	AM 0212923, տրված 18.02.2011թ., 052-ի կողմից		
	Մարկոսյան Քնարիկ Գագիկի	1996թ.	ԱԱ N018915		
	Մարկոսյան Գրիշա Գագիկի	1999թ.	ԱԱ N176921		


2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2010 թվականի ապրիլի 7-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում բնակելի տուն (բնակարան) ստացող ընտանիքների ցուցակները հաստատելու մասին» N 46 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) ուժը կորցրած ճանաչել հրամանի N 6 հավելվածով հաստատված՝ «Լոռու մարզի Արևաշող համայնքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, 2008 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ հաշվառված ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում բնակելի տուն ստացող ընտանիքների ցուցակի 13-րդ կետը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

Նախարար՝

Իսկականի հետ ճիշտ է



« 27 » 04 2011թ.